
ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՄՈՐՈՒՄՆԵՐԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(1926–1934 թթ.)

ՌՈՒԲԵՆ ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆ

Հայ գրականությունը 1920-ական թվականների երկրորդ կեսին աստիճանաբար անցում էր կատարում դեպի սոցիալիստական ռեալիզմի մեթոդաբանությունը: Սակայն, ի տարբերություն մշակույթի մյուս բնագավառների, այստեղ անցումը կատարվում էր խիստ բարդ ու հաճախ անձնական վիթրավորանքների և մեկը մյուսի դեմ իշխանության վերին մարմիններում բողոքների ու գրպարտագրերի առկայության պայմաններում:

1926 թ. դեկտեմբերի 21–23-ը տեղի է ունենում հայ գրողների Ասոցիացիայի և “Նոյեմբերի” միավորիչ կոնֆերանսը, ուր ձևավորվում է Հայաստանի պրոլետարական գրողների միությունը: Բայց այդ միավորումից հետո էլ գաղափարական տարաձայնությունները շարունակվել են: Որպես միավորման առաջին քայլ պետք է լիներ “Պրոլետարական գրողներ” ժողովածուն, որը լույս տեսավ 1927 թ., բայց այնտեղ էլ երկու նախկին գրական կազմակերպությունների ներկայացուցիչները շարունակեցին դրսևորել իրենց գաղափարական հակամարտությունը: Ասոցիացիայի բանաստեղծները և նոյեմբերականները տպագրվեցին առանձին բաժիններով, տարբեր առաջաբաններով¹: Սա վկայում է դրանց միավորման առերեսության մասին: Ս. Աղաբաբյանը նկատել է. “Նախկին ասոցիացականները սրեր էին ճոճում նախկին նոյեմբերականների դեմ՝ հիմնականում նյութ ունենալով նրանց առաջադրած տեղային մթնոլորտի գեղագիտությունը, իսկ նոյեմբերականները հանդես էին գալիս ասոցիացականների դեմ՝ գրական սխեմատիզմի դավանանքի քննադատությամբ”²:

1927 թ. օգոստոսից հրատարակված Հայաստանի պրոլետարական գրողների միության պաշտոնական “Գրական դիրքերում” ամսագիրը թեև կոչված էր լինելու գրական միասնական ճակատ ստեղծելու նախաձեռնողը, բայց իրականում պառակտում էր այդ ճակատը՝ քննադատության սուր սլաքներ ուղղելով Ստ. Զորյանի, Ե. Չարենցի, Ալ. Բակունցի և Գ. Մահարու դեմ: Ս. Աղաբաբյանի արտահայ-

¹ Ս. Բ. Աղաբաբյան. Հայ սովետական գրականության պատմություն, հ. I, Երևան, 1986, էջ 49:

² Նույն տեղում:

տությամբ՝ “երկրորդ տեսակի արվեստի շեփորահար քննադատները (Գ. Վանանդեցի, Հ. Մկրտչյան, Ն. Դաբադյան, Ը. Վահանյան և այլք) ինքնանպատակ էսթետիզմի դեմ պայքարի դիրքերից հարցականի տակ էին դնում առհասարակ արվեստի գեղեցկություններն ու յուրահատկությունները”³:

Համոզվելու համար, որ այս հեղինակներն իրոք հանդես էին գալիս գոեհիկ սոցիոլոգիայի դիրքերից, բերենք օրինակներ: Այսպես, Ն. Դաբադյանը “Մարքսիստական գրաքննադատության ռեզիզմի մարքսիզմի դրոշակի տակ”⁴ հոդվածում մասնավորապես գրում է. “Դասակարգային հասարակության մեջ գրողն իր սոցիալական համակրանքով, ձգտումներով ու ստեղծագործության “սոցիալական պատերով” կապված է այս կամ այն հասարակական խմբակցության հետ, իրերն ու երևույթները դիտում է այդ հասարակական խմբակցության աշխարհահայեցողությամբ, երևույթներին ցույց է տալիս այս կամ այն վերաբերմունքը, այլ կերպ ասած՝ իր ստեղծագործության մեջ դնում է որոշ դասակարգային բովանդակություն: Եվ հենց վերջին դրությունը խոսում է այն մասին, որ դասակարգային հասարակության մեջ բացարձակ օբյեկտիվ գեղարվեստի տեսությունը հանդիսանում է գեղարվեստի զարգացման օրենքներին չհամապատասխանող մի ֆիկցիա”⁵:

Ն. Դաբադյանը, այսպիսով, գտնում է, որ դասակարգային հասարակության մեջ գրողը կապված է հասարակական այս կամ այն խմբակցության հետ և, փաստորեն, իր ստեղծագործության մեջ դնում է դասակարգային բովանդակություն: Բայց դա չի կարելի համարել ընդհանրական տեսակետ, որովհետև գրողի համար իրավիճակի գեղարվեստական արտացոլումն ավելի հաճախ չի մատնանշում կոնկրետ կողմնորոշում. նրա մոտ դրական կերպարները կարող են լինել հասարակության յուրաքանչյուր շերտից: Իսկ կոնկրետ դասակարգային շեշտադրումը բերում է ծրագրային գրական խոսքի, որը քննություն չի կարող բռնել պատմական բոլոր ժամանակներում: Ճիշտ չէ հեղինակը, երբ օբյեկտիվ գրականությունը համարում է ֆիկցիա: Այստեղից էլ խիստ վիճելի է հնչում նրա հետևյալ տեսակետը ևս. “Գեղարվեստի հարաբերական օբյեկտիվության հարցը դնելիս անպայման պետք է ընդգծել, որ վերելքի շրջան ապրող դասակարգերի գեղարվեստը, ներկա դեպքում՝ պրոլետարականը, իր բնույթով ավելի է օբյեկտիվ, քան անկման դիմող բուրժուազիայի գեղարվեստը”⁶:

Պրոլետարական կամ բուրժուական գրականություն հասկացությունները սուբյեկտիվ տեսություններ են կամ արհեստածին ու նման տարաբաժանումն ա-

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս □Գրական դիրքերում□, տեսական-քննադատական, գրական-գեղարվեստական պատկերազարդ հանրամատչելի ամսագիր, -2, սեպտեմբեր, Երևան, 1927, էջ 1-5:

⁵ Նույն տեղում, էջ 2-3: Մեջբերումները տրվում են արդի ուղղագրությամբ:

⁶ Նույն տեղում, էջ 3:

նրնդունելի է և երբեք չի եղել: Դա բնորոշ էր միայն խորհրդային շրջանին, որն այսօրվա հեռավորությունից արդեն քննություն չի բռնում:

Գ. Վանանդեցին Ա. Տերտերյանի “Նկատողություններ մեր գյուղագիրների մասին” հոդվածի իր գրախոսականում հետևյալ թյուր պատկերացումն է ներկայացնում Ակ. Բակունցի գյուղագրությանն առնչվող պատմվածքների մասին. “Ակսելը հեղափոխական և կոմունիստական հուզաշխարհի մարդ չէ: Նա ներփակված է առայժմ ինդիվիդուալիզմի շրջանակներում: Ժամանակակից գյուղագիրը ևս, լինելով արտահայտիչը գյուղացիության, չի կարող ինքնուրույն, առանձին իդեոլոգիա ունենալ: Նա ենթակա չէ պրոլետարական գաղափարախոսության ուժեղ ազդեցության: Այլ կերպ լինել չի կարող: Մեր գյուղագիրները պրոլետարական իդեոլոգիայի վրա կանգնած գյուղացիական գրողներ են: Եվ “հակադրելով հին գյուղին նորը”, այո՛, նրանք հակադրում են կապիտալիստական հունով զարգացող գյուղին՝ սոցիալիստական ուղիով առաջադիմող գյուղը: Գյուղի նկատմամբ ևս ընկեր Տերտերյանը ճշգրիտ պատկերացում, մարքսիստական պատկերացում չունի: Նա հիշատակում է, որ հին գյուղն ապագայի շատ դրական սաղմեր է պարունակում իր մեջ: Դրանք համայնակցության այն սովորույթներն են, որոնք մինչև այժմ պահպանվել են հայ գյուղում. օրինակ՝ համայնական խոտհարքը, հարսանիքներին “կանչը”, ձեռքառ նետելը, առուների մաքրումը:

Այդ սովորույթներն ընկ. Տերտերյանը համարում է նոր տնտեսակարգի՝ սոցիալիզմի պայմաններ⁷:

Այս ամենը նա համարում է տուրք տալ նարդնիկությանը և ուտոպիա է համարում, որ գյուղում “կարող է ծնունդ առնել սոցիալիզմն առանց պրոլետարիատի ղեկավարության”⁸:

Ինչն է վիճելի այս ամենի մեջ. նախ՝ Բակունցի ստեղծագործության հետ կապված, որին հեղինակը չի համարում պրոլետարական գաղափարախոսության գյուղագիր: Մրանով նա թեքվում է դեպի գոեհիկ սոցիոլոգիայի դիրքերը, քանի որ գյուղագիր լինել չի նշանակում սոսկ ներկայացնել տիրող և շահագործվող խավի հակադրությունը կամ առհասարակ մերժել հին գյուղը: Գրողի համար կարևոր են գյուղի սոցիալական, սիրո, կենցաղային պատկերների վերհանումը գեղարվեստական յուրօրինակ ոճով և ոչ թե հին գյուղն ամբողջությամբ մերժելը: Մա նույնիսկ հակամարքսիստական թեզ է, որովհետև նորի կառուցումը չի ենթադրում հնի ամբողջությամբ մերժում: Բացի այդ, գյուղացու կենցաղային սովորույթների, նախապաշարմունքների մատուցումը գեղարվեստական խոսքի մեջ նշանակում է

⁷ Նույն տեղում, էջ 9:

⁸ Նույն տեղում, էջ 9–10:

նան դրանց քննադատում, որը և սոցիալիզմի գրականության կարևորագույն խնդիրներից է:

Ինչ վերաբերում է, որ հին գյուղն էլ իր մեջ լավ տարրեր կամ սովորույթներ է պարունակել, ապա դրանում ոչ մի վատ բան չի կարելի տեսնել, քանի որ էվոյուցիոն զարգացումը տեղի է ունենում հնից եկած լավի և նորի յուրօրինակ միաձուլման արդյունքում: Պարզ է, որ Գ. Վանանդեցու տեսակետները քննադատության չեն դիմանում և գյուղում սոցիալիզմի կառուցման տեսությունների ծայրահեղ ընկալման հետևանք են:

Ցավով պետք է նշել, որ այս ժամանակահատվածի բազում տաղանդավոր հայ գրողներ, որոնք ավելի ճիշտ հայեցակետեր էին մշակել գրականության զարգացման առումով, գտնվում էին առավել թույլ գրողների հարձակման թիրախում, որոնք կուսակցական գծից շեղվելու պատրվակի ներքո անձնական խնդիրներ էին լուծում: Նույն Գ. Վանանդեցին Ե. Չարենցի՝ մինչև 1925 թ. ներառող ստեղծագործությունների մեջ էլ չի տեսնում պրոլետարական ուղղություն, այլ, նրա կարծիքով, դրանք տանում էին ֆուտուրիզմի ու մեսչանկանության, ավելին՝ նա գնում է դեպի կոնստրուկտիվիզմը, որը նշանակում էր ֆուտուրիզմի կերպարանափոխություն, և ինչի արդյունքում գրված նրա ստեղծագործություններում (“Կոմալմանախ”, “Կապկազ թամաշա” և այլն) ձևամոլությունը հասցվել է ծայրահեղության: Այդ գրվածքները նա համարել է ազիտացիոն գործեր, որն այդքան էլ ճիշտ չէ: Նա գտնում է, որ Չարենցն այսուհետև (գործը գրված է 1926 թ. մարտին) իր ստեղծագործությունների մեջ պետք է մտցնի “պրոլետարիատին հարազատ և դասակարգային հստակ ոգի”:

Կարծում ենք, որ խիստ անորոշ հասկացողություն է այդ ոգին, և այն յուրաքանչյուր ոք կարող է յուրովի հասկանալ ու պատկերացնել: Այնուամենայնիվ, դասակարգային բնեռացումը գրականության մեջ չի կարող հանգեցնել գրական ակնառու գործերի ստեղծման, և ծրագրային ստեղծագործությունները՝ պայմանավորված դասակարգային պայքարի արտացոլումով, երբեք չեն ունեցել գեղարվեստական բարձր արժեք: Պատահական չէ, որ այսօր ավելի շատ արժևորվում են Չարենցի, Բակունցի այն ստեղծագործությունները, որոնք չեն ծնվել արհեստական տեսական հիմնավորումների հենքի վրա: Սա է պատմական ճշմարտությունը:

Ռուս քննադատ Ա. Մերիլանովսկու այն կարծիքից ելնելով, որը վերջինս տվել էր Հայաստանի գրողների Ասոցիացային, գրելով, թե “Զգալի սխալներ գործեց նաև նապաստոյան այնպիսի հին և փորձված մի ջոկատ, ինչպիսին Հայաստանի

⁹ Գ. Վանանդեցի. Մարտիրոս Մարյան, Եղիշե Չարենց. նրանց ստեղծագործությունների հասարակական արժեքը, Երևան, 1926, էջ 71–75:

Ասոցիացիան է”, Ն. Չարյանը և Վ. Ալազանը ասպարեզ են հանում “Վճռական մարտերի նապաստուկյան ֆրոնտում” մարտաշունչ հոդվածը¹⁰:

Ինչպես նկատել է Ս. Աղաբաբյանը, հայ դիրքականների մոլեգին քննադատության հիմնական թիրախը Ե. Չարենցի ստեղծագործությունն էր, “որի “պսակազերծումով” այդ քննադատությունը ցանկանում էր թուլացնել նոյեմբերյանականների գեղագիտական առաջադրությունները”¹¹: Նա ամեննին չի սխալվում՝ այնուհետև գրելով հետևյալը. “Գ. Վանանդեցու, Ն. Դաբադյանի, Հ. Մկրտչյանի բանավիճային հոդվածների նպատակակետն ըստ էության ստեղծագործական հարցերը չէին, այլ խմբակային նկատառումներ, ասել է թե՛ Չարենցի և մյուս նոյեմբերականների գրական կայուն դիրքերը Ա. Վշտունու, Վ. Ալազանի, Ն. Չարյանի անկայուն դիրքերով փոխարինելը”¹²:

“Գրական դիրքերում” հանդեսը որդեգրել էր մի որոշակի քաղաքականություն, որը միտված էր ազգային մշակույթի ժխտողականությանը և թմրկահարում էր սխեմատիզմը: Այս խնդիրները լրջորեն քննարկվում են պրոլետարական գրողների անդրկովկասյան առաջին համագումարում 1928-ին, ուր ցույց է տրվում նախկին ասոցիացիականների և նախկին նոյեմբերականների խորացող հակամարտության վտանգավորությունը: Նորից առաջ է քաշվում գրական խմբավորումների միավորման խնդիրը: Հարցն այն էր, որ բացի պրոլետարական գրողների միությունից 1926 թ. մայիսից գործում էր “Հայ գրական ընկերությունը”, իսկ 1927 թ. օգոստոսից՝ “Հայ աշխատավորական գրողների միությունը”: Նույն թվականին կազմակերպվում է նաև հայ գրողների Անդրկովկասյան ասոցիացիան:

“Հայ գրական ընկերության” անդամները (Սալման, Էմին Տեր-Գրիգորյան, Ստեփան Կանայան և ուրիշներ) առաջնորդվում էին “քաղաքականությունից անկախ արվեստ” նշանաբանով, իսկ “Հայ աշխատավորական գրողների միությունը”, որին անդամակցում էին Դ. Դեմիրճյանը, Ստ. Չորյանը, Մ. Մանվելյանը, Վ. Թոթովենցը և ուրիշներ, դնում էր ակտիվորեն սոցիալարարությանը լծվելու խնդիրը: Այս ամենին մասամբ վերջ է տալիս 1929 թ. ապրիլի 28-ին կայացած Պրոլետարական գրողների միության և Աշխատավորական գրողների միության միավորիչ կոնֆերանսը, որն սկիզբ է դնում Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիային, և որի պաշտոնական թերթն է դառնում “Նոր ուղին”:

Ճեղերացիայի դեկլարացիայի մեջ մասնավորապես կարդում ենք. “Ճեղերացիան, ստեղծագործական խնդիրներում կանգնելով պրոլետարական ռեալիզմի տեսակետի վրա, պայքարելով գրական սխեմատիզմի արտահայտությունների

¹⁰ Ս. Բ. Աղաբաբյան. նշվ. աշխ., էջ 49:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 50:

դեմ, իրեն նպատակ է դնում տալ կենդանի մարդու գեղարվեստական պատկերացումը¹³:

Մակայն այս միավորումից հետո էլ գաղափարական վեճերը շարունակվում են: Կուսակցության կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի որոշումից հետո էլ վեճերը չեն մարում: Դեռևս այս որոշումից առաջ՝ 1928 թ. փետրվարի 28-ին, ՀԿԿ ԿԿ քարտուղարությունն անդրադարձել էր Պրոլետարական գրողների սոցիալիստական գործունեությանը՝ դատապարտելով խմբակայնությունը: Այս որոշումով լիկվիդացիայի էին ենթարկվում ստեղծագործական բոլոր կազմակերպությունները. առաջարկվում էր «կազմակերպել Հայաստանի խորհրդային գրողների Միություն՝ խորհրդային իշխանության պլատֆորմը պաշտպանող և սոցիալիստական շինարարությանը մասնակցելու ձգտող բոլոր գրողներից՝ կազմակերպելով միությանը կից կոմֆրակցիա¹⁴: Որոշմամբ կազմակերպվում էր նաև գրողների միության ստեղծումը նախապատրաստող կազմկոմիտե: Դրան պետք է նպաստեր «Գրական թերթը», որի առաջին համարը լույս տեսավ 1932 թ. մայիսին: Ցավով պետք է նշել, որ այս թերթի թիրախում հայտնվեցին հիմնականում Չարենցը և Բակունցը: Հենվելով Մ. Արմենի մի հոդվածի դրույթների վրա («Չարենցի և հարակից խնդիրների մասին¹⁵»), որում կային ճիշտ գնահատականներ Չարենցի ստեղծագործության վերաբերյալ՝ նրան և Բակունցին վերագրեցին, այսպես կոչված, «ազգային առանձնահատկությունների խտացման տեսությունը»՝ համարելով այն նրանց դավանանքը, որը, բնականաբար, այնքան էլ ճիշտ չէր:

Մինչև 1934 թ. օգոստոսի 1-5-ը կայացած Հայաստանի գրողների առաջին համագումարը գրական բանավեճերը շարունակվում էին: Մեր տրամադրության տակ են գտնվում արխիվային մի քանի փաստաթղթեր, որոնք օգնում են ճշգրիտ պատկերացում կազմել այն իրավիճակի մասին, որն առկա էր գրողների մոտ, և հաճախ պայմանավորված էր ոչ թե գաղափարական, այլ միջանձնային գործոններով: Դրանցից մեկի հեղինակը Ն. Չարյանն է, որն իր անունից ներկայացնում է մի գրություն՝ ուղղված ՀԽ գրողների կազմկոմիտեի Կուսֆրակցիային, իսկ պատճենը՝ ՀԿ/Բ/Կ Կենտկոմի կուլտպրոպագանդին և ՀԿ/Բ/Կ Կենտկոմի քարտուղարությանը: Գրության մեջ նա մտահոգություն է հայտնում, որ մոտենում են Հայաստանի և համամիութենական գրողների համագումարները, որը նշանակում է՝ այն «պետք է դիմավորենք մեր խորհրդային սոցիալիստական գրականության արմատական հարցերը բազմակողմանիորեն քննարկելով և նրանց վերաբերյալ ընդհանուր կուսակցական մոտեցում ու դիրքավորում մշակելով¹⁶: Ըստ նրա՝ «մի շարք

¹³ □ Խորհրդային Հայաստան □, 1. V. 1929:

¹⁴ Մ. Բ. Աղ ա բ ա բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 53:

¹⁵ □ Գրական թերթ □, 1933, № 7:

¹⁶ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1, ց. 14, գ. 47, թ. 1:

հանգուցային հարցեր պետք է իրենց լուծումը գտնեն մինչև համագումարը: Գեթ կուսակցական ֆրակցիայի շրջանակներում¹⁷: Նա գտնում է, որ այդ տեսակետից Գրողների միության աշխատանքում “կան մի քանի կարևոր ձեռքվածքներ, որոնք կարող են կուսակցական աչալուրջ ուշադրության”:

Ն. Ջարյանը դարձյալ փորձում է թիրախավորել Չարենցին և Բակունցին, որոնք փաստորեն, ըստ նրա, նպաստում են ապրիլի 23-ի որոշման կյանքի կոչելու աշխատանքների դժվարացմանը: “Դեռ շարունակվում է խմբային պայքարը կազմկոմիտեի ներսում, – գրում է նա, – Չարենց – Ակսելյան խմբակի և կազմկոմիտեի մյուս ընկերների միջև...¹⁸: “ՀԿ/Բ/Կ Կենտկոմի քարտուղարությունը, – շարունակում է նա, – 1933 թ. օգոստոսի 20-ի որոշումով միանգամայն ճիշտ դիրքավորում տվեց խմբակային պայքարը վերացնելու և գրականության մեջ նկատվող գաղափարական խորթ տրամադրությունների դեմ պայքարելու հարցերին: Այդ որոշումը մատնանշեց, որ ընկ. ընկ. Չարենցի և Ակսելի գլխավորած խմբակը նացիոնալիստական տենդենցներ է արտահայտում և ընկ. Ակսելի վրա, որպես կոմունիստի, պարտականություն դրեց անձամբ դուրս գալ մամուլում և ծավալուն կոնկրետ քննադատությամբ մերկացնել իր և իր խմբակի նացիոնալիստական սխալները¹⁹”:

Սակայն ոչ նա և ոչ էլ նույն պարտականությունն “ստանձնած” այլ գրողներ այդպես էլ հանդես չեն գալիս իրենց հայացքների ժխտմամբ: Ավելին, ըստ Ն. Ջարյանի, “Գրական թերթը”, փոխանակ հանդես գար այդ ընկերների գործերը վերլուծելով և նացիոնալիզմը վեր հանելով, միայն բավարարվում է “մի քանի ընկերների ռապակական սխալների մասին խոսելով և նացիոնալիզմի մասին ընդհանուր հայտարարություններ անելով: “Ավելին, – գրում է նա, – “Գրական թերթը” վերջին ամիսների ընթացքում տարել է և շարունակում է տանել նացիոնալիզմը քողարկելու ակնհայտ քաղաքականություն: Գրական բոլոր այն արտադրանքները, որոնք այս կամ այն չափով արտահայտում են նացիոնալիստական տենդենցներ, կամ լռության մեջ են պահվում կամ “քննադատվում” են նացիոնալիզմը քողարկելու ոգով²⁰”:

Ն. Ջարյանը նացիոնալիզմի մեջ է մեղադրում գրեթե բոլորին: Նա գտնում է, որ Ալազանի “Մաքառումներ” ստեղծագործության վերլուծությանը նվիրված “Գրական թերթի” յոթ էջանոց քննադատության մեջ խոսք անգամ չկա նրա նացիոնալիզմի մասին: Եվ նա այդպիսի սխալ է համարում Ալազանի գործում Խ. Աբովյանի մասին “գովաբանական մոտեցումը”, մի անձի, որին դասում է բուրժուական պոետների շարքը:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, թ. 2:

²⁰ Նույն տեղում:

Այս ամենից խիստ կասկածի տակ է առնվում Ն. Զարյանի կողմից “նացիոնալիզմ” հասկացության էության ըմբռնումն առհասարակ: Նացիոնալիզմի դրսևորումներ է տեսնում նա նաև Մահարու “Մրգահաս”-ում, որը չէր տեսել “Գրական թերթը”, Թոթովենցի “Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա” վեպում, ուր իբրև թե հեղինակը “սխալ և նացիոնալիստական ձևով է պատկերացնում հայթուրքական հարաբերությունները” և այլն²¹: “Ասպիտով,- ընդհանրացնում է նա,- նացիոնալիզմի դեմ պայքար “Գրական թերթը” կամ չի տանում և կամ տանում է ձևականորեն՝ այն սքողելու դիտավորությամբ՝ չնայած ընկ. Խանջյանի կրկնվող ցուցմունքներին նացիոնալիզմի գրական արտահայտությունների դեմ կոնկրետ պայքար ծավալելու վերաբերյալ”²²:

Այն տպավորությունն էս ստանում, որ Ն. Զարյանն ավելի շատ ցանկացել է “Գրական թերթի” պատասխանատու խմբագիր Ալազանին այդ պաշտոնից ազատված տեսնել, խիստ նկատողություններ պոկել Բակունցի, Չարենցի և այլոց համար, քան թե մտահոգված է եղել սոցիալիստական գրականության զարգացման անկեղծ ցանկություններով: Նրա կարծիքով այդ թերթը “սաբոտաժի է ենթարկել Կենտկոմի քարտուղարության օգոստոսի 20-ի որոշումը և ընկ. Խանջյանի ցուցմունքները՝ նացիոնալիզմի գրական արտահայտությունները կոնկրետ և ծավալուն քննադատության ենթարկելու վերաբերյալ”²³: “Այս բոլորից պարզ է,- ընդհանրացնում է նա,- որ “Գրական թերթի” խմբագրությունը չի կարողացել ընդգրկել մեր գրականության հանգուցային հարցերը և նրանց քննությունն ու լուծումը դնել քաղաքական բարձր մակարդակի վրա: Անհրաժեշտ է համագումարից առաջ քննել այս հարցերը կուսֆրակցիայում և այս բոլորի մասին ունենալ կուսակցական համերաշխ տեսակետ”²⁴:

Կարծում ենք, որ չենք սխալվի պնդելով՝ եթե բոլորը մեկի կողմից մեղադրվում են միևնույն սխալի մեջ, ուրեմն այլ է այդ մեկի նպատակադրումը:

Ն. Զարյանի այս գրությունն ու այլ գրպարտանքներ 1933 թ. հուլիսի 9-ի Գրողների միության կոմֆրակցիայի նիստում ստիպել են, որ միջադեպ տեղի ունենա նրա և Բակունցի միջև, ուր բառի իսկական իմաստով ճնշում է եղել այս մեծ գրողի վրա, որին հունից հանել են: Այդ մասին տեղեկանում ենք Բակունցի՝ նույն թվականի հուլիսի 10-ին Ա. Խանջյանին, Ակոպովին և Գ. Հանեսոյանին ուղղված գրությունից, ուր կարդում ենք. “Երեկ՝ հուլիսի 9-ին, Գրողների միության կոմֆրակցիայի նիստում ես, կորցնելով ինձ, հարվածել եմ Նաիրի Զարյանին: Իմ այս հայտարարությամբ ես նպատակ չունեմ որևէ կերպ արդարացնելու ինձ: Այդ կո-

²¹ Նույն տեղում, թ. 2-3:

²² Նույն տեղում, թ. 4:

²³ Նույն տեղում, թ. 6:

²⁴ Նույն տեղում, թ. 7:

մունիստի իսպառ անվայել և անարխիստական քայլը չի բխում իմ բնավորությունից և ոչ էլ իմ վարքից:

Ինչպես անխտիր կվկայեն բոլոր ընկերները, որոնք ներկա էին ֆրակցիայի այդ նիստին, ես ոչ մի ռեպլիկ անգամ չսովի այն անպատասխանատու հայտարարություններին, որ մի երկու մասնակից այդ նիստում արեցին իմ հասցեին: Ավելին. երբ ընկերներից մեկը առաջարկեց ֆրակցիայի քննության նյութ դարձնել Արտաշես Ոսկերյանի զեկուցման ժամանակ Գրողների տանը հրապարակավ իմ հասցեին հնչած մի շարք զրախոսություններ, արված ուն Կարոյանի, ինձ անհայտ Տաճատ Ալեքսանյանի և իր զեկուցողի կողմից, որ ես պետյուրական եմ, դաշնակցական եմ, Նժդեհն եմ և ինչ ասես ես եմ, երբ այդ վայրագությունների մասին վերոհիշյալ ընկերը ֆրակցիայի ուշադրությունը հրավիրեց, վերաբերմունք ցույց տալու իմաստով, ես չբողոքեցի, երբ ֆրակցիան ուրիշ հարցերի անցավ, որովհետև համոզված էի, որ վաղ թե ուշ կքննվի այդ հարցը: Երբ էլույթ ունեցավ Հ. Գյուլիքոյիսյանը և փորձ արեց ապացուցելու, որ ես եմ “ձախը”, ռապպականը, գվարդիանիստը, ես միայն ծիծաղեցի, նկատելով, որ ընկերների մի խումբ նպատակ են դրել ինձ մեղադրելու մահացու բոլոր մեղքերի մեջ, վարկաբեկելու համար:

Իսկ երբ վեր կացավ Նաիրի Չարյանը և մի քանի անգամ կրկնեց, որ գալով դաշնակցությունից՝ ես մնում եմ դաշնակցական, Նժդեհի համհարզն եմ և այլն, ինչպես ասում են լցվեց իմ համբերությունը, և բողոքելով այդ ստոր զրպարտության դեմ, ես դիմեցի և՛ նախագահին, և՛ մյուս ընկերներին՝ խնդրելով ստիպել, որ Նաիրի Չարյանը հետ առնի իր հայտարարությունը: Հենց այդ ժամանակ, ի պատասխան իմ վերջին խնդրին, Նաիրի Չարյանը գոռաց. “Այո՛, դու դաշնակ ես...”:

Ահա այդ ժամանակ ես շուռ եկա նրա կողմը՝ կորցնելով և՛ գիտակցություն, և՛ կամք, և՛ համբերություն:

Հայտնելով երեկվա այդ պատահարի մասին, ես մի անգամ ևս իմ քայլը որակում եմ կոմունիստին անվայել քայլ և համոզված, որ արժանի եմ կուսակցական ամենախիստ տույժի. ես խնդրում եմ ձեզ, ընկերներ՛ր, պատկերացնել այն մթնոլորտը, որում կատարվել է այդ ամենը, և վճիռը սահմանելիս անտես չառնել այն ամենարժանավորը և դրականը, որ ես ունեմ իբրև կոմունիստ և գրող...

Ա. Բակունց

10 հուլիսի 1934 թ.²⁵:

Այս գրությունը մենք ամբողջությամբ մեջբերում ենք ոչ պատահաբար: Այն պարզ է դարձնում իշխող հակասական ժամանակահատվածի մասին շատ դառը ճշմարտություններ: Դրանցից ամենակարևորը հետևյալն է. տաղանդավոր և

²⁵ Նույն տեղում, թ. 29–31:

միանգամայն ճիշտ դիրքերում իրենց պահող գրողները, հանձին Ա. Բակունցի, հանիրավի պիտակավորվել են, և համոզված ենք՝ միայն ու միայն իրենց առավել տաղանդավոր լինելու պատճառով: Հակառակ դեպքում նրան մեղադրողները կբերեին լուրջ փաստարկներ և ոչ թե արհեստական պիտակավորումներով հունից կհանեին տաղանդավոր գրողին, որը հենց այս պատճառով ճաշակեց իր մեծ ողբերգությունը:

Այն, որ Ն. Ջարյանն ու իր կողմնակիցներն ամեն ինչ արել են Բակունցի, Ալազանի և այլոց հանդեպ կեղծ գրպարտանքներ ներկայացնելով, “Գրական թերթը” նացիոնալիստական համարելով՝ անձնական խնդիրներ են լուծել, երևում է նաև Ալազանի՝ կուսվերահսկողության հանձնաժողովի նախագահ Ա. Գալստյանին, պատճենը՝ Ա. Խանջյանին և կենտրոնի կուլտպրոպի բաժնի վարիչ Լ. Արիսյանին ուղղված գրությունից, որից տեղեկանում ենք, որ Ա. Ոսկերչյանը և Գ. Ղազարյանը հուլիսի 11-ին “այն միտքն են հայտնել, որ Ուկրաինայի խորհրդային գրողների համագումարում ընկ. Կոստոյի արտասանած ճառն ուղղված է “Մեր” դեմ (այսինքն իմ, “Գրական թերթի” խմբագրության և նրա շուրջը համախմբված գրողների դեմ)”: Ըստ նրա՝ այդ ճառն ուղղված է եղել Ուկրաինայի նացիոնալիստական, հակահեղափոխական արդեն ջախջախված այն շրջանների դեմ, որոնք հակահեղափոխական, գաղափարական և կազմակերպչական գործակալություններ էին: Եվ ահա այդ ընկերները “Գրական թերթի” շուրջ համախմբվածներին էլ փորձում են ներկայացնել այս գրողների հանդեպ գնահատականների հետնախորքի վրա: Վ. Ալազանը գրում է, որ ոչ մեկին չի հաջողվի նման մեղադրանքներ ներկայացնել իրեն ու իր շրջապատի գրողներին, քանի որ հայտնի է նրա պայքարը հակահեղափոխականների և նացիոնալիստների դեմ: Նա մեջբերում է դաշնակցականների դեմ իր գրած գրքերի վերնագրերը՝ շեշտելով, որ ինքը “դաշնակցական հակահեղափոխական մամուլի էջերում ամենից հայհոյված, ամենից նգովված” անունն է²⁶: “Սակայն ինչպես տեսնում եք, – շարունակում է նա, – գրական խմբակային պայքարում կուրացած ոսկերչյաններն այն տեղն են հասել, որ սկսում են մեզ նույնացնել ուկրաինական հակահեղափոխականների հետ:

Ես իմ խորագույն և անհուն վրդովմունքը հայտնելով Ձեզ, սպասում եմ, որ ինձ և մի խումբ այլ գրողների վարկաբեկման անլուր այս մեթոդին դիմողներն արժանանան կուսակցական խստագույն պատժի”²⁷:

Սակայն այդ պատիժն այն բարդ ժամանակների համար հեշտ չէր, որովհետև նույն գրպարտողները կարող էին իրենց գրպարտագրերն ուղարկել ավելի վերև: Այս առումով նախանձելի վիճակում չէր գտնվում Ա. Խանջյանը: Եվ պատահա-

²⁶ Նույն տեղում, թ. 31 և շրջ.:

²⁷ Նույն տեղում, թ. 32:

կան չէ, որ 1934 թ. օգոստոսի 8-ի՝ վերջինիս ուղղված Ալազանի և Նորենցի մի կարճ գրության մեջ կարդում ենք. “Այսու խնդրում ենք մեզ ազատել “Գրական թերթ”-ում և Գրողների միության կազմկոմիտեում աշխատելուց՝ նկատի ունենալով, որ մենք վերոհիշյալ տեղերում աշխատելու հնարավորություններից զրկված ենք”²⁸:

Գրական կյանքում իշխող անհանդուրժելի մթնոլորտի, միջանձնային լարված հարաբերությունների մասին վկայող այլ փաստեր էլ կան: Այսպես, Խորհրդային գրողների միության կազմկոմիտեի նախագահ Դր. Միմոնյանին՝ 1934 թ. հուլիսի 11-ին Ս. Տարոնցու ուղղած գրության մեջ կարդում ենք, որ Ն. Չարյանի և Ա. Ոսկերյանի համախոհներից ոմն Գառնիկ Ղազարյան Կոստոյի վերոհիշյալ ճառի դրույթներն ամեն կերպ ցանկացել է տարածել մի շարք հայ գրողների վրա՝ Վ. Ալազանի, Ե. Չարենցի, Ակ. Բակունցի, Գ. Մարյանի, Դ. Դեմիրճյանի, Վ. Թոթովենցի, Գ. Մահարու, Վ. Նորենցի, Ս. Տարոնցու և այլն, “որոնց Գառնիկ Ղազարյանների նմանները ամեն տեղ հայտարարում են նացիոնալ-դեմոկրատներ, նացիոնալիստներ, դաշնակցականներ և այլն”: “Այսպիսով, – եզրակացնում է Ս. Տարոնցին, – ուրեմն վերոհիշյալ Հայաստանի կուսակցական և անկուսակցական գրողների մեծամասնությանը Գ. Ղազարյանը նույնացնում է ուկրաինական նացիոնալիստ հեղափոխականների հետ:

Սա անյուր և խայտառակ պրովոկացիա է մի հին կուսակցականի կողմից”:

Իսկապես որ պրովոկացիա, որի հիմքում ընկած էր նախանձը և ուրիշ ոչինչ: Եվ Տարոնցին՝ որպես անկուսակցական գրող, վրդովված պահանջում է, “որ Գրողների միության կազմկոմիտեն ամենախիստ միջոցներ ձեռք առնի նման մտայնության տեր մարդկանց նկատմամբ, համապատասխան օրգանների միջոցով նրանց ենթարկելու խստագույն պատժի”²⁹:

Ցավով պետք է արձանագրել, որ գրապարտողները, ի վերջո, հաղթանակ տարան, որի արդյունքում 30-ական թվականների երկրորդ կեսերին հայ նշանավոր բազում գրողներ ենթարկվեցին բռնադատությունների:

Նույն Դր. Միմոնյանին գրություն է ուղղել նաև Գարեգին Բեսը, որը թվագրված է “19 հուլիսի, 1934” և որից պարզ երևում է, որ Ա. Ոսկերյանի նպատակն ավելի շատ հայ տաղանդավոր գրողներին զրպարտելն ու նրանց նկատմամբ հաշվեհարդար տեսնելն էր, քան թե կուսակցական գծից նրանց շեղվելը, որը երբեք չի եղել:

Նամակում կարդում ենք. “Ս. թ. հուլիսի 11-ին կենտկոմի ճաշարանում ընկ. Արտաշես Ոսկերյանը մոտենալով “Խորհրդային արվեստ” ժուռնալի քարտու-

²⁸ Նույն տեղում, թ. 40:

²⁹ Նույն տեղում, թ. 33–34:

դար ընկ. Աբրահամ Գրիգորյանին (որի հետ նստած էինք միևնույն սեղանի շուրջ), խորհուրդ էր տալիս նրան տպագրել ընկ. Կոսիորի՝ Ուկրաինայի ԽԳՄ - համագումարում արտասանած ճառը, որն, ինչպես հայտնի է, հիմնականում ուղղված է ուկրաինական հակահեղափոխական նացիոնալիստների դեմ:

Ընկ. Ա. Գրիգորյանի և իմ այն հայտարարությունը, թե “մինչև “Խորհրդային արվեստի” նոր համարի լույս ընծայումը “Գրական թերթն” արդեն տպագրած կլինի, ընկ. Ոսկերյանը պատասխանում է, որ “Նրանք այդ ճառը չեն տպագրի, որովհետև ամբողջովին ուղղված է իրենց դեմ” (ընդգծումը մերն է – Ռ. Մ.):

Ես՝ որպես կոմերիտական և ՀԽԳ Միության անդամ, գտնում եմ, որ ուկրաինական հակահեղափոխական նացիոնալիստների և մեր խորհրդային գրողների (համախմբված են “Գրական թերթի” և կազմկոմիտեի շուրջ) նույնացումը մեր ստեղծագործող ուժերին հակահեղափոխության գիրկը նետելը, պրովոկացիոն, հակաբոլշևիկյան մի հայտարարություն է, որի դեմ պետք է սրել ուժեղ պայքար և անել վճռական, կազմակերպչական եզրակացություններ³⁰:

Եզրակացությունը կրկին մնում է նույնը. հիշյալ անձնավորությունը և իր համախոհները կեղծ պիտակավորումով ցանկացել են անձնական խնդիրներ լուծել հայ գրականության տաղանդավոր ներկայացուցիչների հետ: Ինչպես նշեցինք, ցավոք, նրանք, ի վերջո, հասել են հաջողության:

Եվ վերջապես մեկ այլ նամակի ենք ուզում անդրադառնալ, որը հասցեագրված է Ա. Խանջյանին և վերահսկողության հանձնաժողովի նախագահ Ա. Գալոյանին: Այն ստորագրել են Վ. Ալազանը, Վ. Նորենցը և Գ. Վանանդեցին:

Այնտեղ կարդում ենք, որ մի շարք ընկերների, “այն է Ն. Զարյանի, Ն. Դաբալյանի, Ա. Ոսկերյանի և մյուսների ռապպական և խմբակային գործելակերպի մասին բազմաթիվ փաստեր հայտնի են Կուս. կենտր. կոմիտեին: Մենք ավելորդ ենք համարում այդ վաստակի շարանը նորից հիշատակել: Միայն վերջին շրջանում մեր կազմակերպության ներսում շարունակվող նրանց աշխատանքը մեզ բերեց այն համոզման, որ այդ դրությունն այլևս անհանդուրժելի է”: Այնուհետև նրանք արդարացիորեն մեղադրում են “անփորձ”, միայն մի երկու “ռապպական հողվածների” հեղինակ Ա. Ոսկերյանին, որոնցով նա “հակահեղափոխության գիրկն էր նետում մեր լավագույն խորհրդային գրողներից մեկին: Քաջալերվելով մի քանի նույնպես ռապպական ընկերներից, և այն փաստից, որ ընդունվել է Գրողների միության մեջ՝ այդ երիտասարդ ընկերը հրապարակային զեկուցում է կարդում մեր գրականության պատմության հարցերի մասին և օգտվելով իրեն տրված ամբիոնից՝ կոմունիստ գրող Ակսել Բակունցին համարում է դաշնակցական գաղափարախոս, համեմատում է պետյուրականների հետ: Դրանից քաջալերվելով՝

³⁰ Նույն տեղում, թ. 35:

գրականության հետ բացարձակորեն ոչ մի կապ չունեցող մարդիկ Ալեքսանյանի և Կարայանի տիպի նույն ձևի այլանադակ էլույթներ են ունենում Գրողների տանը՝ անկուսակցական լսարանի առջև³¹:

Ինչպես մի ավելորդ անգամ համոզվում ենք, երիտասարդ “գրչակները” հարվածի տակ էին փորձում առնել հայ գրականության մեծերին, որոնց գրչի և մտքի ստեղծագործական թոփչքներից անասելի հեռու էին:

Նամակում բացահայտվում է Ն. Զարյանի իրական դեմքը, որի վրայի կեղծիքը լիովին նա փորձել է շղարշել, բայց այսօրվա հեռավորությունից այն լիարժեքորեն պարզ է: Որպես դրա ապացույց կարող են ծառայել թե՛ նախորդ նամակից մեր արդեն կատարած մեջբերումները և թե՛ այս նամակի հետևյալ տողերը. “Ընկ. Ն. Զարյանը, ի շարս այլ հակակուսակցական հայտարարությունների (հուլիսի 9-ի Կոմ. ֆրակցիայի նիստում – Ռ. Մ.), բռնացիորեն հայտարարեց, թե Ակսել Բակունցը եղել է դաշնակցական կոմիտեի անդամ և ներկայումս էլ դաշնակցական է, Նժդեհի համհարզը: Ընկ. Բակունցը, որ մինչ այդ միանգամայն հանգիստ էր պահում իրեն, դիմեց նախագահին (Դր. Սիմոնյանին – Ռ. Մ.) պահանջելով, որ հայտարարությունները հետ առնվեն, կամ Զարյանին ցույց տրվի համապատասխան վերաբերմունք: Այդ պահանջի վրա Ն. Զարյանը կրկին պնդեց իր հայտարարությունը և անվայել ձևով, որից հետո Բակունցը կորցրեց իր հավասարակշռությունը, և երկուսի միջև տեղի ունեցավ մի անթույլատրելի ընդհարում³²:

Հեղինակները, բնականաբար, չեն արդարացնում Բակունցի պահվածքը, քանի որ դա այլ կերպ կդիտվեր այն բարդ ժամանակների համար, բայց արդարացիորեն դատապարտում են Ն. Զարյանի “սանձարձակ, մեծամիտ և անբարտավան վերաբերմունքը”: Նրանք բերում են նորանոր փաստեր՝ ի ապացույց այդ վերաբերմունքի, և հայտնում են, որ այլևս հնարավորություն չունեն աշխատելու նման մարդկանց հետ, “որոնք իբր թե մարմնացնում են կուսակցության գիծը, սակայն իրապես նրանք թե՛ կոմունիստ, թե՛ անկուսակցական բազմաթիվ գրողների նկատմամբ տանում են ... հակակոմունիստական քաղաքականություն և դրանով քայքայման վտանգ ստեղծում գրողների կազմակերպության համար”:

Այս ամենից էլնելով՝ նրանք խնդրում են, որ Ն. Զարյանը, Ն. Դաբաղյանը և Ա. Ոսկերչյանը հեռացվեն կազմկոմիտեից, իսկ Ն. Զարյանը, ոչ մի ակնառու գրական գործ ստեղծած չլինելով, հեռացվի Գրողների միությունից:

Նամակը վերջանում է հետևյալով. “Իսկ եթե Կենտկոմն ու Վերահսկողության հանձնաժողովը գտնում են, որ մենք սխալվում ենք, և վերոհիշյալ ընկերների վարքագիծը ճիշտ է, ապա խնդրում ենք մեզ ազատ արձակել Գրողների միության

³¹ Նույն տեղում, թ. 37:

³² Նույն տեղում, թ. 37–38:

մեջ որևէ ակտիվ աշխատանք կատարելուց և այն պատասխանատվությունից, որ մեզ վրա, որպես կոմունիստ գրողների, ընկնում է վերոհիշյալ ընկերների գործունեության շնորհիվ³³:

Մեր տրամադրության տակ է նաև մի ռուսերեն փաստաթուղթ կամ ավելի ճիշտ գրպարտագիր՝ ուղղված Չարենցի, Ալազանի, Բակունցի ու Վանանդեցու դեմ, որի տակ չկա ստորագրություն: Այն թվագրված է 1934 թ. հունիսի 13-ին՝ ուղղված Հայաստանի Կենտկոմի բյուրոյին, իսկ պատճենը՝ Կենտկոմի լենինիզմի պրոպագանդայի և կուլտուրայի բաժնին: Հեղինակը գրում է, որ ինքը լսել է, որ Գրողների տանը Չարենցը կարդացել է իր «Գիրք ճանապարհի» ստեղծագործությունը, որի տպագրությունն արգելված էր, իսկ կարդալուց հետո Ալազանը, Վանանդեցին և Բակունցը գոչել են «Կեցցե՛ Չարենցը», և նրանց ձայնակցել է ամբողջ դահլիճը: «Այս խոսքերը,– գրում է հեղինակը,– առաջինը գոչեց Ալազանը, իսկ նրանից հետո ամբողջ դահլիճը: Այսպիսով, լավ իմանալով, որ այս գիրքն արգելված է, Վ. Ալազանը, Վանանդեցին և մյուսները կազմակերպեցին ամբողջական քաղաքական շարժում այս արգելված գրքի օգտին»³⁴: Եվ նա այդ շարժումը համարում է Կենտկոմի դեմ շարժում, քանի որ գրքի հրատարակումն արգելված էր: Հասկանալի է, որ այս նամակի հեղինակը, ըստ էության, կարող էր լինել Ն. Ջարյանի համախոհներից մեկը, եթե ոչ ինքը:

Այսպիսով՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

առաջին. հայ գրողները համախմբվելու փոխարեն, անձնական խնդիրներ են փորձել լուծել, որը կարելի է պայմանավորել առավել հզոր գրական դեմքերի, այդ թվում՝ Չարենցի և Բակունցի հանդեպ նախանձով ու անհանդուրժողականությամբ:

Երկրորդ. 1930-ական թվականների նման իրավիճակը հիմք հանդիսացավ, որ հայ մեծատաղանդ գրողները զոհ դարձան ստալինյան բռնաճնշումներին:

Երրորդ. խորհրդահայ գրողներից շատերը, կուսակցական գծի հակառակորդներ ներկայացնելով առավել տաղանդավորներին, արջի ծառայություն են մատուցել սեփական ժողովրդին՝ գրպարտագրերով նրան, զրկելով իր գրական մեծություններից: Այսօրվա հեռավորությունից քննելով պատմական իրադարձությունները՝ համոզվում ենք, որ ներքին թշնամին է ավելի շատ նպաստել շատ հայ գրողների հիշյալ ժամանակահատվածի ողբերգությանը, քան կոմունիստական բարձրագույն մոսկովյան օղակները, որոնք հազիվ թե իմանային՝ ինչ է կատարվում Հայաստանի Գրողների միությունում: Սա է պատմական անողորմ ճշմարտությունը:

³³ Նույն տեղում, թ. 39:

³⁴ Նույն տեղում, թ. 41:

ЛИТЕРАТУРНО-ХУДОЖЕСТВЕННЫЕ БРОЖЕНИЯ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ
(1926–1934 гг.)

РУБЕН МИРЗАХАНИЯН

Резюме

В 1926–1934 гг. армянские писатели, вместо сплоченности, посвящали себя решению личных вопросов, что, скорее всего, объяснялось завистью по отношению к самым значительным фигурам армянской литературы, включая Чаренца и Бакунца. Данная ситуация, конечно же, привела к тому, что среди самых талантливых армянских писателей было много жертв репрессий сталинского режима. Преставление многих писателей Советской Армении как противников коммунистической партии было настоящей медвежьей услугой по отношению к армянскому народу, так как лишало нацию литературных гениев посредством обвинительных доносов. Рассматривая данные исторические события через призму наших дней, мы убеждаемся, что внутренний враг способствовал трагедии армянских писателей вышеупомянутого периода больше, чем партийная верхушка в Москве, которая вряд ли знала о ситуации в Союзе писателей Советской Армении. И в этом заключается безжалостная историческая правда.

LITERARY-FICTION FERMENT IN SOVIET ARMENIA
(1926 – 1934)

RUBEN MIRZAKHANYAN

Summary

Between 1926 and 1934, the Armenian writers, instead of solidarity, would rather dedicate themselves to the solution of personal issues, which might stem from some envy and calumny cast against the most formidable figures of Armenian literature – including Charents and Bakunts. That situation, consequently, resulted in the fact that among the most talented Armenian writers there were many victims of repression of Stalin's regime. Introducing many of the writers of Soviet Armenia as opponents of the Communist Party, it was a real disservice done to the Armenian people by depriving the nation of their literary geni through accusatory denunciations. Considering these historical events from the present-day perspectives, we get convinced that the internal enemy would contribute to the tragedy of Armenian writers of the above-mentioned period more than the top Communist-party circles in Moscow which were less likely to be aware of the situation at the Writers Union of Soviet Armenia. Hence, this is the ruthless historical truth.